

# ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ- ԺԳ 00.02  
ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Հաստատված է՝

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի

N.- նիստով

Ե Ր Ե Վ Ա Ն – 2012

Նկարչության դասավանդման մեթոդիկան անհատի դաստիարակության հիմնահարցերն ուսումնասիրող ուսումնական առարկա և գիտության բնագավառ է: Նրա բովանդակության հիմքում ընդհանուր մանկավարժության և հոգեբանության, գեղագիտության, կերպարվեստի նվաճումներն են և նկարչական /գեղանկար, քանդակագործություն, գրաֆիկա, դեկորատիվ կիրառական արվեստ/ և նրանց դասավանդման մեթոդիկայի մեջ տեղ գտած նորամուծությունները:

Սույն ծրագիրն ուղղված է ասպիրանտներին և հայցորդներին, որոնք ունեն բարձրագույն գեղարվեստա-մանկավարժական կրթություն: Այն ենթադրում է կայուն, բազմակողմանի գիտելիքների պաշար և ազատ, անկաշկանդ կողմնորոշում ընդհանուր մեթոդաբանական, պատմա-տեսական, նկարչության /կերպարվեստի/ դասավանդման մեթոդական հարցերում, գեղարվեստական ուսուցման դաստիարակության ասպարեզում, տարբեր տիպի կրթական հիմնարկներում /հանրակրթական դպրոց, նկարչական ստուդիաներ, նկարչական դպրոցներ, գեղարվեստական ուսումնարան/: Ընդհանուր տեսական գրականությանը տիրապետելուց բացի, ասպիրանտը կամ հայցորդը պետք է ուսումնասիրի հատուկ գրականություն, ինչպես նաև պետք է լիարժեք տիրապետի գեղանկարչական կատարողական վարպետությանը, կարողանա իր նկարչական /գրաֆիկական և գեղանկարչական/ աշխատանքներում արտահայտել բնորդի ճիշտ բնութագրումը, համամասնությունների փոխհարաբերությունները, գունային կոլորիտ և այլն: Այդ իսկ պատճառով քննությունը ներառում է նաև գործնական մաս, որի ընթացքում ստուգվում են քննվողի ունակությունները բնօրինակից նկարչության կատարման միջոցով /բնորդի մեկ ֆիգուրա-գծանկար - 3 օր, օրեկան 6-ական ժամ, ընդ. 18 -ժամ, նյութը` թուղթ, մատիտ և բնորդից կիսաֆիգուր, ձեռքերով-գունանկար 3 օր, օրեկան 6-ական ժամ, ընդ. 18 ժամ, նյութը` կտավ, յուղաներկ/:

Գեղարվեստական դաստիարակության և կրթության գործընթացի ընդհանուր մանկավարժական հիմունքները

Իրականության գեղագիտական ըմբռնումը: Արվեստը, որպես հասարակական գիտակցության և իրականության արտացոլման պատմականորեն զարգացող յուրատեսակ ձև: Գեղագիտական դաստիարակության էությունը, դրա առանձնահատկությունները դաստիարակության այլ ձևերի համեմատությամբ:

Արվեստը և գեղագիտական դաստիարակությունը: Սովորողի գեղեցիկի ընկալումը և գնահատման ունակությունը:

Ժամանակակից արվեստագետները գեղարվեստական ստեղծագործության ձևի և բովանդակության մասին: Կերպարվեստի դերը արդի հասարակության մեջ: Գեղարվեստական կրթության և դաստիարակության դերը անհատի բազմակողմանի զարգացման գործընթացում:

Գեղարվեստական դաստիարակության և նկարչության դասավանդման բովանդակության ու նպատակների մեկնաբանումը պատմական տարբեր ժամանակաշրջաններում:

Անցյալի մեծ մանկավարժները անհատի բազմակողմանի զարգացման և գեղարվեստական կրթվածության մասին /Յա.Ս. Կոմենսկի, Ջ. Լոկկ, Ժ.Ժ Ռուսսո, Ի. Պեստալոցցի/: Դպրոցները և այլ կրթարանները գեղարվեստական կրթության զարգացման պատմության մեջ: Հին աշխարհի երկրներում Եգիպտոս, Հունաստան, Չինաստան, Հայաստան և Միջագետքի երկրներ:

Միջնադարյան Հայաստան – 10-16-րդ դդ. գեղանկարչության հայկական հիմնական դպրոցները, Կիլիկիա, Բարձր Հայք, Սյունիք, Արցախ, Վասպուրական, Նախիջևան, Շիրակ և Լոռի՝ դպրոցներ, Թորոս Ռուլին, Գրիգոր Մլիճեցի, Գրիգոր Ծաղկող, Սիմեոն Ռիմենթեցի, Սարգիս Պիժակ, Վարդան Արծկեցի, Ջաքարյա Աղթամարցի, Ավագ.....

17-18-րդ դդ. – Հայաստանում գործում էին Ստեփանոս Լեհացին, Սիմեոն Ջուղայեցին, Խոշոր դպրոցներից Նախիջևանի դպրոցը, Հովհանավանքի դպրոցը, Վարագավանքի դպրոցը, Բաղեշի դպրոցը և այլն:

Եվրոպական երկրներ – Վերածննդի շրջան /Չենինո- Չենինի, Լ. Բ. Ալբերտի, Լեոնարդո դա Վինչի, Ա. Դյուրեր/: Իտալական և ֆրանսիական գեղարվեստական ակադեմիաները, նրանց յուրահատկությունները և տարբերությունները: Նկարչության դասավանդման «երկրաչափական» և «բնագրական» մեթոդների բովանդակությունը, / Ի. Պեստալոցցի, Ի. Շմիտդ, Ֆ. և Ա. Դյուլայուլիներ, Ֆ. Կուլման, Լ.Տեդդ, Լ. Պռանզ/:

Նկարչության դասավանդման ռուսական դպրոցը, նրա զարգացման էտապները / Ի. Պլեյսեր, Ա. Սապոժնիկով, Պ.Չեստյակով, Դ. Կարդովսկի Ֆ. Յուդն/:

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի զարգացման ժամանակակից փուլը դպրոցում, նրա տարատեսակները: Հոգեբանությունը և մանկավարժական

գիտությունը, ընկալման մտածողության, հիշողության, պատկերացումների երևակայության զարգացման և փոխադարձ կապի մասին:

Սովորողների զարգացման հիմնական օրինաչափությունների, տարիքային, անհատական առանձնահատկությունները, ընդունակությունների զարգացումը: Գեղարվեստական դաստիարակության և կերպարվեստի ուսուցման հիմնական ուղիներն ու միջոցները:

Ուսումնա - դաստիարակչական սկզբունքները կերպարվեստի պարապմունքների ընթացքում: /Գիտականության ու մատչելիության սկզբունք, անկարելիության սկզբունք և այլն/: Կերպարվեստի և այլ առարկաների միջառարկայական կապերի ուսուցողական հիմունքները:

Աշխատանքի ձևերը կերպարվեստի դասերին, դրանց խնդիրները, փոխկապակցվածությունը: Սովորողների գեղագիտական-գեղարվեստական դաստիարակության ներդաշնակության հիմնախնդիրը:

Երեխաների ծանրաբեռնվածության և գերծանրաբեռնվածության հիմնահարցը գեղարվեստական դաստիարակության ծրագրերի ստեղծման գործում:

Դպրոցը, որպես մանուկների գեղագիտական, ազգային-հայրենասիրական դաստիարակության կենտրոն:

Գեղարվեստական-կերպարային մտածողության զարգացման ուղիները, նրանց կատարելագործման մեթոդները:

Երեխաների գեղարվեստական դաստիարակության մեթոդներն ընտանիքում և զանգվածային լրատվամիջոցների /հեռուստատեսության և այլն/ դերը դպրոցականների գեղագիտական-գեղարվեստական դաստիարակության գործում:

ԳԵՂԱՆԿԱՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Լ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ